# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ու Մ

**03 հոկտեմբերի 2024 թվականի N** 362 **-Ա**

### ՏԱՐԵՑՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 100 ԵՎ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով,հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի գրությունը և Սյունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետի զեկուցագիրը՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1. Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N1 հավելվածի N1 աղյուսակի 01 բաժնի 01 խմբի 01 դասի 03՝ «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծախսային ծրագրով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի համար նախատեսված ծախսերի « Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով սահմանված ֆոնդից 600.000 (վեց հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով տարեցների միջազգային օրվա կապակցությամբ դրամական պարգևատրում հատկացնել Սյունիքի մարզի 100 և բարձր տարիքի վեց քաղաքացու՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ սահմանված կարգով ապահովել վերոնշյալ գումարի վճարումը Սյունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության ավագ մասնագետ Մարիաննա Ստեփանյանի հաշվեհամարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնելու նպատակով:
3. Սյունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության ավագ մասնագետ Մարիաննա Ստեփանյանին 5-օրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն դրամական պարգևատրման հատկացման վերաբերյալ:

Recoverable Signature

X

Signed by: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2024թ. 03 հոկտեմբերի
ք. Կապան

Հավելված

ՀՀ Սյունիքի մարզպետի

2024թ-ի հոկտեմբերի 03-ի N 362 Ա որոշման

Ցանկ

դրամական պարգևատրում ստացող տարեցների

| N | ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ | ՀԱՄԱՅՆՔ | ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|
| 1. | Թադևոսյան Խանում | Ք. Գորիս | 100.000(հարյուր հազար) |
| 2. | Թադևոսյան Արշալույս | Ք. Քաջարան | 100.000(հարյուր հազար) |
| 3. | Ստեփանյան Արևհատ | Ք. Գորիս | 100.000(հարյուր հազար) |
| 4. | Չիլֆուղարյան Վարթիգյուլ | Ք. Սիսիան | 100.000(հարյուր հազար) |
| 5. | Գրիգորյան Մարուսյա | Ք. Գորիս | 100.000(հարյուր հազար) |
| 6. | Վարդանյան Հակոբ | գ. Լոր | 100.000(հարյուր հազար) |

Recoverable Signature

X

Signed by: MARTIROSYAN EDGAR 4003840615

Գլխավոր քարտուղար՝ Է. Մարտիրոսյան